ջնջել յԱրքունի Դիւանէ զարձանագրութիւնս երից հրովարտակաց Հայոց ։

1°.— Սակս նորոգութեան Տաճարին Ս. Յարութեան, տուեալ 'ի թուին ١٢٤٩ ։

2°.— Վասն նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի, ١٢٥١ ։

3°.— Վասն շինութեան Համբարձման տեղւոյն, ١٢٥٢ ։

Եւ տուաւ նոր հրովարտակ վարիլ ըստ մնաց հրովարտակաց տուեալ 'ի թուին՝ ١٢٢٨, յորում յառաջ բերի իբր պատճառ, թէ հրովարտակքն զոր գրեցաք 'ի վեր՝ տուեալ են միայն 'ի խնդրոյ Պատրիարքին Հայոց ։ Սակայն գիտել գիտացին թէ ծածկապէս ուժգին շնչելոյ հիւսիսային հողմոյ, փոթորկեաց և սասանեցոյց զգուռն, և յայս եղանակ շրջեաց զխնդիրն ։

Եւ յետ այնորիկ՝ ըստ Իլամի Դատաւորին Երուսաղէմի՝ զոր առեալ էին Յոյնք, առին 'ի Դրանէ նոր հրովարտակ 'ի ١٥ Զիլգատէ ամսոյ՝ ١٢٥٢, ('ի 21 Փետրվարի · 1837), եւ վերստին ինքեանց սեփհականեցին զընդհանուր շինութիւնն Ս. Տեղեաց ։

Յետ այնորիկ չոքան Յոյնք առ Դատաւորն Երուսաղէմի Համտուլլահ էֆէնտի եւ ասեն. եթէ քակես զշինուածս Համբարձման՝ և բառնաս զամենայն եկեղեցական սպասս, եւ խափանես զպատարագն եւ զարարողութիւնս Հայոց՝ բերեալ մատուսցուք առ զհրովարտակն Արքունի. իսկ եթէ ոչ՝ դարձուցանեմք զայն առ Տէրութիւնն, և բողոք բառնամք զքէն վասն ոչ գործադրելոյ զայն ։ Դատաւորն ոչ ետ տեղի բանից նոցա, այլ վերստին գրեաց 'ի Դուռն հրովարտակաւ հաստատել զիրաւունս Հայոց՝ զի անկործան մնասցեն շինուածքն ։ Սակայն Յոյնք ոխացեալ ընդ Դատաւորն՝ գրեցին գիր ամբաստանութեան զնմանէ եւ զազգէն Հայոց առ Հիւպատոսն Ռուսաց, եւ առաքեցին զայն յԱղէքսանդրիա 'ի ձեռն պատգամաւորի, եւ միջնորդութեամբ նորին խնդրեցին 'ի Փոխարքայէն Եգիպտոսի՝ առնել քննութիւն ծանուցեալ խնդրոյ, որպէս տեսցի 'ի ստորեւ ։

Ընթերցեալ Հիւպատոսին զնամակ միաբանացն Յունաց, գրեաց առ ատենական Թարգման Պօղոս Պէյ օրինակ զայս ։

« Զգանկատանս միաբանացն Յունաց զԴատաւորէն Երու-